ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՆՆԵՐԻՑ

Ապրիլի 18-ին համաձայն կոնդակի Վեհափառ Հայրապետի աղգիս, Սինոդը որոշեց տալ վաղարշապատցի խնդրատուներից նրանց, որոնք այգի չունին, այգեստեղեր Դոլակ և Հնձանափոս կոչուած վանքապատկան հողից, իսկ տուն չունեցողներին նաև տնատեղեր։

Ապրիլի 19-ին Սինոդը որոշեց կապալով տալ Օշական և Եղուարդ վանքապատկան գիւղերի բահրան՝ բերքի 1/5 մասն և ծխահարկը, և աճուրդ նշանակել Սինոդի առեւնում մայիսի 12-ին, իսկ կրկնաճուրդ մայիսի 15-ին, հրատարակել այդ մասին Երևանի յայտարարութեանց, Թիֆլիզի Կաւկազ, Մշակ և Նոր-Դար լրագիրներում և խնդրել Էջմիածնի գաւառապետից այդ մասին յայտարարել ի լուր գաւառի ազգաբնակութեան։

Ապրիլի 21-ին Սինոդը հրամայեց Թիֆլիսի առաջնորդ գերապատիւ Տ. Գարեգին արքեպիսկոպոսին այժմեանից ժամանակաւորապէս վարձել մի հմուտ անձն Մարցի կալուածքը կառավարելու համար, ռոճիկը նշանակել կալուածքի եկամտից և ապա ժողով կազմելով մասնագէտներից, մշակել յիշեալ կալուածքը կառավարելու և շահագործելու ծրագիրը՝ ձեռքի տակ ունենալով սրանից վեց տարի առաջ մասնագէտների և Տիրայր վարդապետի կազմածը և շուտով ներկայացնել այն Սինոդին։

Նոյն թուին Սինոդը որոշեց Երևանի կոնսիստորիայի միջոցով հրամայել Նոր-Բայազէդի գործակալ Արտակ վարդապետին՝ վարձել Բշնի անտառի համար երկու անտառապահ և ժամանակաւոր կառավարիչ նշանակել իւր օգնական Ռափայէլ քահանայ Տէր Գէորգեանին՝ վճարելով անտառապահներին ամսական ոչ աւելի տասն ռուբլուց վիճակային արդիւնքներից։ Բացի դորանից ծանուցանել գործակալին, որ համաձայն Բշնեցի Յովսէփ Գրիգորեանի զեկուցման, այնտեղի թուրք բնակիչները սկսել են կոտորել և արմատախիլ անել անտառի ծառերը և հողերը հերկելով, միացրել իրենց հողերի հետ և տիրապետել «Աղդաշ» կոչուած և այլ հողերին։

Ապրիլի 24-ին Սինոդը որոշեց հրամայել Թիֆլիզի էջմիածնապատկան կալուածների կառավարիչ Տ. Եփրեմ վարդապետին տարւոյս վերջը Օրթաճալայի այգին կապալով տալ Վերայի այգու կապալառու պ. Սվեշնիկեանի խորհրդակցութեամբ. Դաշտի Խաչի կալուածքը կապալով տալ ածրդախօսութեամբ, կապալառութիւնից շուտով հեռացնել Շադինեանցին և նրա վրայ մնացած վարձադրամը պահանջելով դատաստանական կարգով, վանքապատկան տունը կապալով տալ ածրդախօսութեամբ։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Երևանի կոնսիստորիային անմիջապէս պահանջել Իգդիրի քահանայ Տ. Մեսրոպ Շաւարշեանից նրա վրայ մնացած 705 ռ. 34 կ. վիճակային արդիւնքը։

Ապրիլի 26-ին Սինոդը որոշեց՝ որովհետև քահանայացուների ընտրութեան և ձեռնադրութեան ծրագրի մասին թեմական առաջնորդների կարծիքը դեռ չի ստացուած, չը նայած որ նշանակուած ժամանակամիջոցն արդէն անցել է և որովհետև գիւղերից շատերը մնում են

առանց քահանայի, ուստի մինչ ցառանձին տնօրինութիւն՝ պատուիրել թեմական առաջնորդներին, որ կարգադրեն ընթացք տալ այն գիւղերի քահանացուների ձեռնադրութեան գործին, որոնք սեփական քահանայ չունեն՝ կանխապէս քննութեան ենթարկելով ընծայացուներին Սինոդի մշակած ծրագրի համաձայն։

Ապրիլի 28-ին Սինոդը որոշեց հրաւիրել երդուեալ հաւատարմատար պ. Գարեգին Ենգիբարեանին Սինոդի փաստաբան և հաղորդելով իւր պայմաններն, առաջարկեց գրաւոր յայտնել իւր համաձայնութեան մասին։

Նոյն թուին Սինոդը որոշեց աճուրդ նշանակել իւր առեանում՝ մի տարի ժամանակով կապալով տալու «Համբերդ» արօտատեղին։

Նոյն թուին Սինոդը մերժեց Վրաստանի և Իմերեթի վիճ. կոնսիստորիայի միջնորդութիւնը ծառայողների ռոճկի վերաբերութեամբ և հրամայեց վարուել սոյն տարուայ մարտի 17-ին № 343 հաղորդած շտատի համաձայն, որոշելով յայտնել այս մասին վիճակային կոնսիստորային։

Մայիսի 1-ին Սինոդը հրամայեց թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Բահարլու գիւղի բնակիչ Գրիգոր տէր Գրիգորեանին և ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ, մերժել նոյն գիւղի բնակիչ Սմբատ տէր Ցարութիւնեանի ձեռնադրութեան գործը նրա տգիտութեան պատճառով և խիստ քննութիւն կատարել՝ պարզելու Սմբատ տէր Ցարութիւնեանի ուսման վկայականի կեղծիքը և քննութեան հետևանքը ներկայացնել ս. Սինոդին։